Մի երեխայ, որ մանկութեան հասակում բացարձակապէս զուրկ էր մնացել խաղալիքներից, պատանեկութեան հասակումն էլ բախտ չունեցաւ լուսանկարուելու: Եւ տեղի ունեցաւ առասպելական մի բան 19-րդ լուսաւոր դարում: Դուրեանի կենսագիր Բարսեղ Խըչէրեանը բանաստեղծի մահից յետոյ հետն առնում է մի լուսանկարիչ եւ նկարել է տալիս Ագրիպաս եղբօրը, որ բաւական նման էր հանգուցեալ Պետրոսին, ապա նկարել է տալիս մի քանի ազգականների եւ դրանց բոլորի լուսանկարները համեմատելով եւ սրբագրելով դուրս է բերում մեռած Դուրեանի հաւանական, մօտաւոր *նկարը եւ ներկայացնում է Սկիւտարի Գրասիրաց ընկերութեանը: Հէնց այդ լուսանկարն էլ կցուած է նրա ընդարձակ կենսագրութեանը, որից եւ ընդօրինակուել են յետագայում բոլոր լոյս տեսած նկարները:*

Շագանակագոյն խիտ մազեր ունէր Դուրեանը, որ միշտ դէպի վեր էր սանտրում եւ մէջտեղից ճեղքում աղջկայ պէս. յօնքերը սեւ էին եւ գեղեցիկ, արծուաքիթ էր, կլոր դէմքով, շրթունքները նուրբ կանացի գեղեցկութեամբ: Բնաւորութեամբ չափազանց զուարթ էր, կատակասէր, երգը միշտ շրթունքին: Անման բարի էր, հեզ, շնորհալի. ատելութիւնը, ոխը, նախանձը, բամբասանքն անծանօթ էին նրան, ինչպէս եւ մեծամտութիւնը: Նա համեստ, խոնարհ, սիրող ու ներող հոգի ունէր: Սրամիտ էր, լաւ յիշողութեան տէր, խելացի եւ ընդունակ:

Նրա դպրոցական եւ կեանքի լաւագոյն ընկերն էր վաղամեռիկ Վարդան Լութֆեանը, որի մահը Դուրեանն երգեց մի զողտրիկ ոտանաւորով: Այդ տղան էլ անբախտ էր եւ զոհ գընաց դարձեալ անաւէր թոքախտին: Այդ երկու թշուառ հոգիները սիրում էին իրար մի աննըման, գաղափարական սիրով, որ բարոյակըրթական նշանակութիւն կարող է ունենալ մեր մատաղ սերնդի համար:

Դուրեանին ըստ ամենայնի բնորոշում է հետեւեալ փաստը: Երբ նա այստեղ ու այնտեղ է ընկնում եւ ամէն կերպ աշխատում է իրենց ընտանիքի վրայ «բեռ մը չըլլալ», մէկ օր էլ հայ թատրոնի յուշարարի առաջարկութեամբ գըրում է «Արտաշէս Ա.» *թատերգութիւնը, որի համար ստանում է 10–15 ոսկի վարձատրութիւն: Նա անմիջապէս այդ փողով գնում է հագուստ իր փոքր եղբայրների համար եւ հոգում է տնային այլ կարիքներ:*

Բարի հոգի ունեցող Դուրեանը գիտէր անվերջ սիրել: Նա որոնող, յափշտակուող, պաշտող բնաւորութիւն ունէր: Սէրը դարձրել էր նա մի կուռք, աստուածութիւն, որին երկըրպագում էր ամենայն ջերմեռանդութեամբ: Նրա սէրը սարփալից չէր, անկիրք էր, կարծես երկնային, որի համար նա տանջուեց ու այրուեց, այլ եւ ողջակէզ դարձաւ…

Սիրած աղջիկը չատելով իրեն, գուցէ եւ փոխադարձաբար սիրելով, գիտակցեց նրա ահաւոր աղքատութիւնը, թոքախտաւոր լինելը եւ հասարակ ծագումը, մինչդեռ ինքը հաւանօրէն ազնուական դասակարգից էր, եւ մերժեց Դուրեանի սէրը, որի համար տառապեց եւ բանաստեղծ դարձաւ Սկիւտարի Սոխակը…

Տեղեկութիւնների համաձայն Դուրեան սիրել է տակաւին աշակերտական նստարանից եւ սիրել է իր դասընկերուհիներից մէկին, որի անունը Սաթենիկ է եղել: Այդ աղջիկը յետոյ ամուսնանում է մի ուրիշի հետ, որին հաւանօրէն չէր սիրում, բայց շուտով մեռնում է եւ խոր կսկիծ պատճառում Դուրեանին: Բանաստեղծը ծծելով յուսախաբութեան եւ սեւ ճակատագրի մրուրը, հեծեծում է եւ հրաշակերտում իր ներքին դառն ապրումները, որոնք գերազանցօրէն ե՛ւ անհատական են, ե՛ւ համամարդկային:

Դուրեանն «արտայայտում է սիրող եւ տանջուող մարդու յաւիտենական ողբերգութիւնը, իսկ այդ ողբերգութիւնը յատուկ է ո՛չ միայն հայ ժողովրդին, այլ եւ բոլոր ժողովուրդներին հաւասարապէս. ահաւասիկ Դուրեանի գոյութեան եւ բանաստեղծութեան տեւողութեան գլխաւոր հիմունքներից մէկը, եւ թերեւս ամենագլխաւորը»*) :

Այժմ անցնենք նրա գրական գործունէութեանը:

---

*) «Պետրոս Դուրեան»՝ *Սիմէոն Յակոբեանի:*